REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE
МАЯКОВСКИЙ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

N 114
2 հունիսի 2017 թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գուլոյան

''Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ներկայացվում 2017 թվականի մայիս ամսվա ընթացքում Մայակովսկի համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումների պատճեները. / թիվ 45-Ա, 46-Ա , 47-Ա / :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.հունիսի2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2017 թվական N 45 Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 րդ հոդվածի 1 ին մասի 2 րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչ Հերմինե Վարդանյանի դիմումը օգնության մասին և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը, ***որոշում եմ***՝

1. Մայակովսկի համայնքի 2017 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից Հերմինե Վարդանյանին տալ 35 000 /երեսունհինգ հազար/ դրամ դրամական օգնություն :

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.մայիսի 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2017 թվական N 46-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Ռոբերտ Յազիջյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Ռոբերտ Յազիջյանին սեփականության իրավունքով պատկանող 07-043-0128-0256 կադաստրային ծածկագրով 0.2341 հա , 07-043-0128-0258 կադաստրային ծածկագրով 0.05255 հա, 07-043-0128-0260 կադաստրային ծածկագրով 0.2117 հա և 07-043-0128-0273 կադաստրային ծածկագրով 0.06244 հա հողակտորները միավորել՝ ընդհանրը 0.56079 հա , և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Մայակովսկի, երրորդ դաշտ,թիվ 6 հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2017թ.մայիսի 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի, Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<30 >> մայիսի 2017թվական N 47 -Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մայակովսկի համայնքի բնակիչ Ռոզա Մարգարյանի դիմումը , որով նա ցանկություն է հայտնել օրինակեցնել համասեփականության իրավունքով իրենց պատկանող 7 -րդ փողոց, թիվ 24 հասցեի տնամերձ հողամասում / ծածկագիր 07 043 0022 0002 / գտնվող ինքնակամ շինությունները :

Համայնքի կադաստրային քարտեզի և տեղում կատարված ուսումնասիրություններից պարզվել է , որ քաղաքացիներ Ռոզա, Սևակ, Ռուդիկ և Ռուբեն Մարգարյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 7 -րդ փողոց, թիվ 24 հասցեի տնամերձ հողամասում 1979թվականին ինքնակամ կառուցվել է՝

1) բնակելի տուն S 74.65 քմ և 95.25 քմ 2) բաց պատշգամբ S= 26.66 քմ, 3) աստիճան S= 6.63 քմ, 4) հարթակ S=22.80 քմ ,5) կաթսայատուն S= 2.70 քմ , 6) պարիսպ S= 0.14 քմ :

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11,22.1 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը , որ քաղաքացիներ Ռոզա, Սևակ, Ռուդիկ և Ռուբեն Մարգարյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 7 -րդ փողոց, թիվ 24 հասցեի տնամերձ հողամասում գտնվող շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը , շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն հակասում քաղաքաշինական նորմերին՝ ***որոշում եմ***՝

1. Քաղաքացիներ Ռոզա, Սևակ, Ռուդիկ և Ռուբեն Մարգարյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 7 -րդ փողոց, թիվ 24 հասցեի տնամերձ հողամասում կառուցված .

1) բնակելի տուն S 74.65 քմ և 95.25 քմ 2) բաց պատշգամբ S 26.66 քմ, 3) աստիճան S= 6.63 քմ, 4) հարթակ S 22.80 քմ ,5) կաթսայատուն S= 2.70 քմ , 6) պարիսպ S= 0.14 քմ մակերեսներով շինությունները համարել օրինական :

2.Հաշվի առնելով այն հանգամանքը , որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը , այդ շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում :

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կոտայքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Ռոզա, Սևակ, Ռուդիկ և Ռուբեն Մարգարյաններին համատեղ սեփականության իրավունքները՝ նշված ինքնակամ շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2017թ.մայիսի30